## ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

*Վախճանվեց Սիլվա Կապուտիկյանը՝ XX դարի ամենանշանավոր հայ բանաստեղծներից մեկը: Ավելի քան յոթանասուն տարի նրա բանաստեղծությունները հնչում էին Հայաստանում և ամենուրեք, որտեղ հայ մարդիկ էին ապրում:*

*Կապուտիկյանի ճակատագիրը սերտորեն կապված էր մեր երկրի պատմության ամենաբարդ ժամանակաշրջաններից մեկի հետ: Նրա ծնողները վանեցի գաղթականներ էին, և Վանը, նրա հիշատակները ի սկզբանե Կապուտիկյանի էության մեջ էին: Դրանով նախանշվեց նրա բանաստեղծության գլխավոր երակներից մեկը՝ հայրենիքի թեման, որին բանաստեղծը երբեք չդավաճանեց: Պատերազմի տարիներին գրած «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը, հիսունականների վերջերին գրած «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը և բազմաթիվ այլ գործեր դարձան հայկական ճակատագրի ու հոգեբանության անգերազանց խտացումներ: Վերջին մեկուկես-երկու տասնամյակների գործերը՝ նվիրված Հայաստանին, անկախությանը, համակված են խոր մտահոգությամբ հայրենիքի ճակատագրով:*

*Սիլվա Կապուտիկյանը եղավ XX դարի հայ բանաստեղծության ամենանուրբ քնարերգուներից: Ետպատերազմյան տարիներին գրված նրա քնարական բանաստեղծությունները դարձան երգ, տարածվեցին Հայաստանում, սփյուռքում, նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, որտեղ նա ամենասիրված բանաստեղծներից էր: Կանացի հոգեբանության այդքան խոր արտահայտություններ հայ բանաստեղծության մեջ մինչ այդ չէին եղել:*

*Կապուտիկյանի անհատականության ամենաակնառու գիծը թերևս նրա քաղաքացիական կեցվածքն էր, որը ծնունդ էր ժողովրդի և մարդու հանդեպ խոր սիրո: Սկսած հիսունական թվականներից, Կապուտիկյանը դառնում է հայ և խորհրդային ամենանշանավոր հրապարակախոսներից մեկը, օգտագործում իրեն հասանելի ամբիոնները՝ հասարակական կյանքի ախտերի, չարաշահումների մասին խոսելու համար: Նրան շատ էին մտահոգում ազգային ճակատագրի, ազգային մշակույթի խնդիրները. նա հայոց լեզվի պահպանման ու զարգացման առաջամարտիկներից էր իր սերնդի, իրենից ավագ ու կրտսեր այլ բանաս-*

*տեղծների և գործիչների հետ: Նրա հրապարակախոսական հոդվածներն ու գրքերը, ուղեգրությունները մնում են ոչ միայն նրա ժառանգության էական մասը, այլև անցյալ դարի երկրորդ կեսի հայ հասարակական կյանքի կարևորագույն վկայությունները: Կապուտիկյանն առաջինն էր, որ, վաթսունականներին ստեղծված բարենպաստ մթնոլորտից օգտվելով, պատմեց հայկական սփյուռքի մասին, եղավ այն բոլոր երկրներում, որտեղ հայկական գաղութներ կային, և ստեղծեց հայկական սփյուռքի գրական համապատկերը, որը, ինչքան էլ իր վրա ուներ ժամանակի քաղաքական նախապաշարումների ու նաև արգելքների կնիքը, անգնահատելի դեր կատարեց մեր ժողովրդի միասնության վերարծարծման, ազգային կյանքի հասունացած հարցերի քննության ասպարեզում: Նրա ելույթները, գրքերը, հոդվածները ամենուրեք ակտիվ արձագանք ու վեճեր էին հարուցում, և այդ բոլորը այն տարիների հասարակական կյանքում բարերար դեր էին կատարում:*

*Կապուտիկյանի վաստակը հայ մշակույթի զարգացման մեջ գնահատվեց զանազան մրցանակներով և պարգևներով. այդ վաստակի համար նա ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:*

*Իր կենսասեր, կենսահաստատ բնավորության շնորհիվ Կապուտիկյանը կյանքում շրջապատված էր բարեկամներով, նրա տունը Երևանի մտավորականության սիրելի վայրերից էր, որտեղ քննարկվում էին գրականության, արվեստի, հասարակական կյանքի կարևորագույն հարցեր: Առհասարակ վերջին մի քանի տասնամյակների Հայաստանի հոգևոր կյանքը առանց Սիլվա Կապուտիկյանի հնարավոր չէ պատկերացնել:*

*Նրա մահով ավարտվում է մի ամբողջ հարուստ, բարդ, հակասական շրջան հայ գրականության մեջ, ազգային հոգևոր կյանքում: Նրա ժառանգության լավագույն մասը վերջնականորեն գտնում է իր տեղը հայ գրականության գանձարանում:*

Կառավարական հանձնաժողով
Հայաստանի Հանրապետության գրողների միություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա